

Տնողությունը – 150րոպե

1. Քանի՞ տոկոսով է 80-ի 30%-ը փոքր 80-ի 50%-ից:
1) 16 2) 20 3) 40 4) $66\frac{2}{3}$
2. Գտնել միանիշ պարզ թվերի այն բոլոր ընդհանուր բազմապատիկների քանակը, որոնք եռանիշ թվեր են:
1) 4 2) 5 3) 9 4) 13
3. Արամը ոտքով տանից գնում է դպրոց: Տանից դուրս գալուց 7 րոպե հետո նրան մտում է անցնելու ևս 640մ, իսկ 11 րոպե հետո՝ 320մ: Որքա՞ն է տանից դպրոց եղած հեռավորությունը:
1) 880 2) 960 3) 1100 4) 1200
4. Ժամը քանի՞ սն է այժմ, եթե օրվա անցած ժամանակի $\frac{1}{7}$ մասը հավասար է մինչև կեսօր մնացած ժամանակի $\frac{1}{3}$ -ին:
1) 7 անց 28 րոպե 2) 8 անց 24 րոպե 3) 9 անց 20 րոպե 4) 10 անց 36 րոպե
5. Բնական թվի և նրա թվանշանների արտադրյալը հավասար է 777: Գտնել այդ թվի թվանշանների գումարը:
1) 10 2) 16 3) 20 4) 21
6. Բնական թիվը 6-ի և 5-ի բաժանելիս ստացված մնացորդների գումարը 9 է: Գտնել մնացորդների արտադրյալը:
1) 15 2) 16 3) 20 4) 12
7. Քանի՞ թվանշան ունի 0 և 1 թվանշաններով կազմված ամենափոքր թիվը, որը բաժանվում է 15-ի:
1) 3 2) 4 3) 5 4) այդպիսի թիվ չկա
8. 2019 թվի թվանշանները տեղափոխելով ստացել են 2019-ից մեծ ամենափոքր թիվը և 2019-ից փոքր ամենամեծ թիվը: Գտնել այդ թվերի տարբերությունը:
1) 270 2) 171 3) 189 4) 288
9. Եթե մտապահված թվին գումարենք 2019 և ստացված թիվը բաժանենք մտապահված թվին, ապա քանորդում կցտանանք 25, իսկ մնացորդում՝ 3: Գտնել մտապահված թվի թվանշանների գումարը:
1) 16 2) 15 3) 12 4) 10
10. Հանդիպման վայր եկան 12 ընկերներ: Հանդիպելիս նրանք զույգ առ զույգ միմյանց ողջունեցին ձեռքսեղմումներով: Ընդամենը քանի՞ ձեռքսեղմում տեղի ունեցավ:
1) 24 2) 132 3) 66 4) 11
11. 100 զբոսաշրջիկներից 66-ը գիտեն գերմաներեն լեզու, 72-ը՝ ֆրանսերեն, իսկ 8-ը չգիտի ո՛չ գերմաներեն, ո՛չ ֆրանսերեն: Քանի՞ զբոսաշրջիկ գիտի և՛ ֆրանսերեն և՛ գերմաներեն:
1) 28 2) 34 3) 52 4) 46
12. Ամանում դրված է տանձ և խնձոր: Երբ երեխաները կերան խնձորի $\frac{1}{3}$ մասը, ամանում մնաց ամբողջ մրգի $\frac{3}{4}$ մասը: Սկզբում ամանում եղած մրգերից ո՞րն է շատ և քանի՞ անգամ:
1) խնձորը՝ 3 անգամ 2) խնձորը՝ 2 անգամ 3) տանձը՝ 3 անգամ 4) տանձը՝ 2 անգամ
13. Ինչ-որ ամսվա 1-ը ո՛չ կիրակի է, ո՛չ էլ երեքշաբթի, 2-ը՝ ո՛չ հինգշաբթի է, ո՛չ էլ շաբաթ, 3-ը՝ ո՛չ երկուշաբթի է, ո՛չ էլ չորեքշաբթի: Ի՞նչ օր է այդ ամսվա 4-ը:
1) հնարավոր չէ որոշել 2) չորեքշաբթի 3) ուրբաթ 4) կիրակի

Տևողությունը – 150րոպե

14. 3 գավաթը և 2 սափորը միասին կշռում են այնքան, որքան 17 ափսեն: 1 սափորը կշռում է 1գավաթի ու 1 ափսեի չափ: Քանի՞ ափսեի չափ է կշռում 1 սափորը:

- 1) 3 2) 4 3) 5 4) 2

15. Արմենը, Դավիթը, Միքայելը և Նարեկը մասնակցել են վազբի մրցույթի: Այն հարցին, թե ո՞վ որ տեղն է գրավել նրանք պատասխանեցին.

Արմեն- Ես երկրորդն էի, իսկ Նարեկը՝ երրորդը,

Միքայել- Ես երրորդն էի, իսկ Արմենը՝ առաջինը,

Դավիթ- Ես երրորդն էի, իսկ Նարեկը՝ չորրորդը:

Տղաներից ո՞վ է գրավել առաջին տեղը, եթե նրանցից յուրաքանչյուրի ասածներից մեկը ճիշտ է, իսկ մյուսը՝ սխալ:

- 1) Արմենը 2) Դավիթը 3) Միքայելը 4) Նարեկը

16. Աստղանիշը փոխարինել թվով այնպես, որ ստացվի ճիշտ հավասարություն.

$$2\frac{1}{5} - 11\frac{1}{5} : \left(17\frac{2}{3} - \frac{*}{3}\right) = 1$$

17. ABCD քառակուսու կողմը 10 է: BC կողմի վրա վերցված է M կետն այնպես, որ BM:MC=4:6, իսկ CD կողմի վրա վերցված է N կետն այնպես, որ CN:ND=8:2: Գտնել AMN եռանկյան մակերեսը:

18. Արամը գրատախտակին գրել է բոլոր երկնիշ թվերը՝ 10, 11, 12, ..., 99: Դավիթը գրատախտակին գրեց 132-ի և այդ թվերից յուրաքանչյուրի տարբերությունը: Քանի՞ թիվ է գրատախտակին գրված երկու անգամ:

19. Իրար հետևից գրված են մինչև 200-ը եղած բոլոր բնական զույգ թվերը՝ 24681012...200: Ո՞ր թվանշանն է գրված 115-րդ տեղում:

20. 20 սմ × 20 սմ × 20 սմ չափսեր ունեցող խորանարդը ներկելու համար պահանջվեց 20 գրամ ներկ: Քանի՞ գրամ ներկ է անհրաժեշտ 40 սմ × 40 սմ × 40 սմ չափսերով խորանարդը ներկելու համար: